Հաստատված է
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարության
շուկայի վերահսկողության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2018 թվականի հունվարի 25-ի որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
Ծ Ր Ա Գ Ի Ր

Բովանդակություն

1. Ներածություն _____ 3

2. Ծրագրի նպատակները _____ 3

3. Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները _____ 4

4. Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը _____ 5

5. 2018 թվականին Ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը _____ 8

1. Ներածություն

Տեսչական մարմնի 2018 թվականի տարեկան գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1063-Ն որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության դրույթները և այլ իրավական ակտեր:

Տեսչական մարմինը իրականացնում է ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների, չափագիտական կանոնների և նորմերի կատարման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ վաճառքի, ինչպես նաև հարգորոշման և հարգադրոշմման պայմանների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն՝ ապահովելով վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների կանխարգելումը, սպառողների իրավունքների և օրիանական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ անվտանգ ոչ պարենային արտադրանքների առկայությունը շուկայում:

Ծրագիրը ներառում է նպատակները, Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները, Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը, նախատեսված միջոցառումները և ակնկալվող արդյունքը, դրանց իրականացման ժամանակացույցը, այդ թվում իրազեկման և կանխարգելման միջոցառումները:

2. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակներն են՝

1) ոչ պարենային արտադրանքի անվտանգության ապահովումը շուկայում.

2) տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների խախտումների կանխարգելումը և վերացումը.

3) պետական չափագիտական վերահսկողության ոլորտում չափագիտական կանոնների և նորմերի կատարման ապահովումը և դրանց խախտումների կանխարգելումն ու վերացումը, չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը.

4) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման պայմանների պահպանման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի տարածքներում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգի և հարգադրոշմի համապատասխանության ապահովումը:

3. Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները

Առավել ռիսկային ոլորտները և տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու, ինչպես նաև Ծրագրի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Տեսչական մարմինը տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից:

Մասնավորապես հավաքագրվել է տեղեկատվություն՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից՝ ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքների, ինչպես նաև ՀՀ տարածքում գործող բենզալցակայանների վերաբերյալ,
2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից՝ ավտոգազալիցքավորման ճնշակայանների և բենզալցակայանների տեղակայման վայրերի վերաբերյալ,
3. <<Չափագիտության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ից՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից ստուգաչափված չափման միջոցների վերաբերյալ,
4. Հավատարմագրման ազգային մարմնի պաշտոնական կայքից՝ տրամադրված համապատասխանության սերտիֆիկատների, համապատասխանության հայտարարագրերի և արտադրանքի պետական գրանցման վերաբերյալ:
5. Իրականացվող դիտարկումների միջոցով՝ ՀՀ տարածքում շուկայահանված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ (համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին),
6. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք իրականացնող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ,
7. Համացանցից՝ իրականացված ուսումնասիրությունների միջոցով,
8. Քաղաքացիներից՝ Տեսչական մարմնի <<Թեժ գիծ>> հեռախոսահամարին ստացված հեռախոսազանգի միջոցով,
9. Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից՝ հաշվի առնելով ստացված առաջարկությունները,
10. ԶԼՄ-ներից:

4. Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Տեսչական մարմնի 2017 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվել էր 148 տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացնել ստուգում, որից

1-ին եռամսյակում՝ -,

2-րդ եռամսյակում՝ 30,

3-րդ եռամսյակում՝ 63,

4-րդ եռամսյակում՝ 55:

Տեսչական մարմինը 2017 թվականի 1-ին եռամսյակում ստուգումներ չի իրականացրել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում համապատասխան փոփոխություններն ու լրացումներն ընդունված չլինելու պատճառով (ընդունվել է 2017 թվականի մարտի 1-ին), իսկ 2-րդ եռամսյակում նախատեսվել էր 30 ստուգում, քանի որ ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1387-Ն որոշմամբ հաստատվել էր ընդամենը 5 ստուգաթերթ: Այնուհետև, ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N756-Ն որոշմամբ հաստատվել է Տեսչական մարմնի կողմից ոչ պարենային արտադրանքների և ծառայությունների նկատմամբ պետական վերահսկողության իրականացման թվով 30 ստուգաթերթ, այդ թվում վերախմբագրվել են ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1387-Ն որոշմամբ հաստատված թվով 5 ստուգաթերթերը:

Առավել ռիսկային տնտեսավարող սուբյեկտներին բացահայտելու նպատակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը համադրվել է Հավատարմագրման ազգային մարմնի պաշտոնական կայքում տեղադրված համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում զետեղված տվյալների հետ, ինչի արդյունքում պարզվել է, որ 2016 թվականի ընթացքում պարբերաբար և խոշոր ծավալի ոչ պարենային արտադրանք ներմուծող տնտեսվարող սուբյեկտների ընդամենը 12.8%-ն է իր կողմից ներմուծած արտադրանքը ենթարկել համապատասխանության գնահատման, իսկ 2017 թվականի ինը ամսվա կտրվածքով՝ շուրջ 25,1%-ը (վերլուծությունը ներկայացված է հավելված 2-ով): Ելնելով վերը շարադրվածից ակնհայտ է, որ գրանցվել է համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանքի աճ՝ 12.3%-ային կետով, ինչը վկայում է ոչ պարենային արտադրանքի շուկայում անվտանգության ցուցանիշների շոշափելի աճի մասին:

Տեսչական մարմնի կողմից 2017 թվականին իրականացվել է թվով 197 ստուգում, որից 144-ը ծրագրով նախատեսված, 45-ը ոլորտային (ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի ոլորտում), 7-ը՝ ՀՀ վարչապետի հանձնարարականով (ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի ոլորտում, չափագիտական կանոնների և նորմերի պահպանման վերաբերյալ), իսկ 1-ը՝ բողոքի հիման վրա:

Ստուգման արդյունքներով վերը նշված ժամանակաշրջանի ընթացքում նշանակված տուգանքների գումարը կազմել է 23,080.0 հազար ՀՀ դրամ, որից 2017 թվականի ընթացում պետական բյուջե արդեն իսկ վճարվել է 16,360.0 հազար ՀՀ դրամ՝ գանձելության ցուցանիշը կազմելով 70,9%: Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Իրականացված ստուգումների արդյունքում 81.7% տնտեսվարող սուբյեկտների (161 տնտեսվարող) մոտ հայտնաբերվել են տարբեր բնույթի (համապատասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն, մակնշման, չափագիտական նորմերի և այլ) խախտումներ: Տնտեսվարող սուբյեկտների 18.3%-ի մոտ (36 տնտեսվարող) խախտումներ չեն հայտնաբերվել:

Ստուգումների ընթացքում, Տեսչական մարմնի կողմից բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ արձակված թվով 16 կարգադրագրերի կատարման ապահովման համար տնտեսվարող սուբյեկետները դիմել և համապատասխան մարմիններից ստացել են՝

- թվով 83 համապատասխանության գնահատման փաստաթուղթ՝ սերտիֆիկատներ և հայտարարագրեր, այդ թվում՝ օծանելիքի, լվացող և մաքրող միջոցների, խաղալիքների, մանկական հիգենիկ պարագաների, թեթև արդյունաբերության և այլ ոլորտներում,
- թվով 145 չափման միջոց ենթարկվել է ստուգաչափման, այդ թվում՝ առողջապահության, բենզալցակայաններում, ԱԳԼՃԿ-ներում և այլ ոլորտներում կիրառվող չափման միջոցներ:

Տեսչական մարմնի կողմից 2017 թվականին իրականացված ստուգումների ընթացքում կիրառել է թվով 397 ստուգաթերթ, որից 257-ով (64.7%) արձանագրվել է խախտում: Խախտումների 28.3%-ը պայմանավորված է համապատասխանության գնահատման փաստաթղթերի բացակայությամբ, 31.4%-ը՝ թերի մակնշմամբ կամ բացակայությամբ, իսկ 40.3%-ը՝ այլ բնույթի (չստուգաչափված լինելը, վառելիքի որակի անհամապատասխանություն և այլն) խախտումներ են: Իրականացված ստուգումների ընթացքում Տեսչական մարմնի կողմից տարեկան կտրվածքով նույն ոլորտում 15 և ավելի կիրառված ստուգաթերթերի արդյունքում հայտնաբերված խախտումների տեսակարար կշռի պատկերը ըստ ոլորտների հետևյալն է՝

- ԱԳԼՃԿ,
- խաղալիք,
- օծանելիքակոսմետիկական արտադրանք,
- ցածրավոլտ սարքավորումներ,
- կենցաղային և սանիտարահիգիենիկ ապրանք,
- ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք,
- չափումների միասնականության ապահովում:

Սույն վերլուծության ամբողջական պատկերը տրված է հավելված 3-ով:

Վերը նշվածը հաշվի առնելով Տեսչական մարմինը կազմել է իր 2018 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը՝ թիրախավորելով տվյալ ոլորտները:

Տեսչական մարմնի կողմից կարգավորվող ոլորտներում առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտներին բացահայտելու նպատակով իրականացվում է հավաքագրված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ տվյալների վերլուծություն: Մասնավորապես իրականացվել է.

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն՝ վերհանելով պարբերաբար և մեծ ծավալի ներմուծումներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտները
2. Տեսչական մարմնի կողմից իրականացվել են դիտարկումներ հետևյալ ոլորտներում՝

   ա) ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ)

   բ) մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցներ

   դ) սինթետիկ հումքով լաքեր և ներկեր

   ե) կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներ

   զ) օծանելիքակոսմետիկական արտադրանք

   է) ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք

   ը) թեթև արդյունաբերության արտադրանք

   թ) գազանման վառելիքով աշխատող սարքավորումներ

   ժ) ռադիոսարքավորումների և հեռախաղորդակցության վերջնակետային սարքավորումներ

   ի) երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք

   լ) ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում սեղմված բնական գազով աշխատող վառելիքային համակարգեր

   խ) ծխախոտային արտադրանք

Դիտարկումներն իրականացվել են բացառապես տեսազննման միջոցով, ինչի արդյունքում հայտնաբերվել են մակնշմանը ներկայացվող պահանջների անհամապատասխանություններ, իսկ ավտոգազալիցքավորման կայաններում՝

լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ճնշման գերազանցում՝ 19.6 ՄՊա-ից, անվտանգության հրահանգների բացակայություն, ինչպես նաև գազի վաճառք՝ մ^3-ով:

5. 2018 թվականին Ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը

2018 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված է վերահսկման ենթակա 29 ոլորտի 240 տնտեսվարող սուբյեկտ (43 տնտեսվարող սուբյեկտ ավելի 2017 թվականին իրականացված ստուգումների ընդհանուր քանակի նկատմամբ): Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումներն իրականացվելիս նախատեսված է կիրառել թվով 451 ստուգաթերթ՝ պայմանավորված տնտեսվարող սուբյեկտի կողմից մեկից ավել ոլորտներում գործունեություն իրականացնելով (ըստ ոլորտների տեղեկատվությունը ներկայացված է հավելված 1-ում):

Տեսչական մարմնի կողմից 2018 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թվաքանակն՝ ըստ եռամսյակների հետևյալն է.

1-ին եռամսյակում՝ 53,
2-րդ եռամսյակում՝ 75,
3-րդ եռամսյակում՝ 64,
4-րդ եռամսյակում՝ 48:

Ծրագրով նախատեսվում է 2018 թվականին իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները՝

- **համապատասխանության գնահատման ոլորտում** իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառմամբ ապահովել համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանք իրացնողների առնվազն 10-12% աճ,
- **չափագիտության ոլորտում** չափագիտական պետական լիազոր մարմնի հետ համագործակցության մակարդակի բարձրացման, և վերահսկողական գործառույթի իրականացմամբ ապահովել ստուգաչափված չափման միջոցների շահագործման առնվազն 8-10% աճ,
- **մակնշման ոլորտում** սպառողների իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառմամբ ապահովել առանց մակնշման կամ թերի մակնշմամբ ոչ պարենային արտադրանքի իրացումն նվազում առնվազն 5-ից 7%-ային կետով,
- **ավտոմոբիլային վառելիքի և սեղմված բնական գազի ոլորտում** իրականացնել շարունակական և հետևողական աշխատանքներ՝ ուղղված

համապատասխան տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների կատարմանը,

- **<u>թանկարժեք մետաղների ոլորտում</u>** հարգորոշող և հարգադրոշմող հաշվառված անձանց կողմից ծավալած գործունեության համապատասխանեցում տվյալ բնագավառը կարգավորող օրենսդրությանը և այդ ոլորտում մանրածախ վաճառք իրականացնողների մոտ դիտարկման իրականացում ու անհրաժեշտության դեպքում իրազեկման աշխատանքների կազմակերպում,
- **<u>ռիսկերի գնահատում՝</u>** Տեսչական մարմնի կողմից 2018թ. ընթացքում իրականացված ստուգումների արդյունքներով պայմանավորված ռիսկերի կառավարում,
- **<u>Տեսչական մարմնի գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտում</u>** առկա խնդիրների բացահայտում և համապատասխան առաջարկությունների ներկայացում, մասնավորապես

  - <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում՝ չափագիտական կանոնների և նորմերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման ժամանակ նախապես 3 աշխատանքային օր առաջ տնտեսվարող սուբյեկտին տեղեկացնելու պահանջի հանում,

  - <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում՝ սահմանելով դիտարկման հասկացությունը և իրականացման կարգը,

  - <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում՝՝ ակտերի դեպքում կատարված ծախսերի բռնագանձում, որը կուղղվի արտաբյուջե,

  - Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխությունների կատարում՝ Տեսչական մարմնին վերապահված հոդվածներում սահմանված տուգանքների չափի վերանայում,
- **<u>կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ</u>** (ծրագիրը ներկայացված է 5-րդ հավելվածով),
- **<u>անձնակազմի կարողությունների զարգացում</u>՝** համագործակցելով ԵԱՏՄ, ԵՄ և այլ միջազգային կառույցների, ինչպես նաև այլ մասնագիտացված շահագրգիռ մարմինների հետ՝ կազմակերպել առնվազն երեք դասընթաց,
- **<u>դիմում-բողոքներին արձագանքում, խորհրդատվության տրամադրում:</u>**

Տեսչական մարմնի կողմից նախատեսված 2018 թվականին իրականացվելիք միջոցառումները՝ ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված են հավելված 4-ով:

Հավելված 1

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՔԱՆԱԿ
1.	ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱԱԿՏԻՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԼՎԱՑՈՂ ՈՒ ՄԱՔՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	13
2.	ՕԴԱՃՆՇԱԿԱՆ ԴՈՂԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	3
3.	ՍԻՆԹԵՏԻԿ ՀՈՒՄՔՈՎ ԼԱՔԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	10
4.	ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	0
5.	ՎԵՐԳԵՏՆՅԱ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՆՎՏԱՆԳ ԱՊԱԿԻՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	3
6.	ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԵՏ ՇՓՎՈՂ ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԴ ՀԻՄՔՈՎ ՊԼԱՍՏՄԱՍՍԱՅԵ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	16
7.	ՌԱԴԻՈՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԵՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	6
8.	ԲԵՏՈՆԻ ԱՄՐԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՊՈՂՊԱՏԵ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	3
9.	ՑԵՄԵՆՏՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	2
10.	ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՂԹԵ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹԵԼՔԵՐԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	21
11.	ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ԲԱԼՈՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	0
12.	ԱՎՏՈԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՃՆՇԱԿԱՅԱՆՆԵՐԻ (ԱԳԼՃԿ) ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	23
13.	ԽԵՑԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՄԱՆԵՂԵՆԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	15
14.	ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	2
15.	ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	4
16.	ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՊԱԿԻՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	2
17.	1000 Վ-ԻՑ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՊԱՐԱՏՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ	0
18.	ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	24
19.	ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	2
20.	ԿԱՀՈՒՅՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	2
21.	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	54
22.	ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	3
23.	ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	6
24.	ՕԾԱՆԵԼԻՔԻ ԵՎ ԿՈՍՄԵՏԻԿ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	41
25.	ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	3
26.	ՓԱԹԵԹՎԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	14
27.	ՑԱԾՐԱՎՈԼՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	65
28.	ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	47
29.	ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	23
30.	ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԵՎ ԱՎԻԱՑԻՈՆ ԲԵՆԶԻՆ, ԴԻԶԵԼԱՅԻՆ ԵՎ ՆԱՎԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՌԵԼԻՔԻՆ, ՌԵԱԿՏԻՎ ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՌԵԼԻՔԻՆ ԵՎ ՄԱԶՈՒԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	26
31.	ԳԱԶԱՆՄԱՆ ՎԱՌԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	11
32.	ՔՍՈՒՔԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻՆ, ՅՈՒՂԵՐԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՀԵՂՈՒԿՆԵՐԻՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԱՐՏԱԴՐԱՆՔ), ԲԱՆԵՑՐԱԾ ՔՍՈՒՔԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ, ՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՀԵՂՈՒԿՆԵՐԻՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԲԱՆԵՑՐԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	7
33.	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԿՑՈՐԴՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	0

Հավելված 2

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԻՆԸ ԱՄՍՎԱ ԿՏՐՎԱԾՔՈՎ ՀՀ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Տեխնիկական կանոնակարգի անվանումը	Տնտեսավարող սուբյեկտների քանակը		Տոկոսային արտահայտությամբ
		ըստ ներմուծումների	ըստ հայտարարագրման	
1.	Քսայուղերի, յուղերի և հատուկ հեղուկներ	23	7	30.4%
2.	Ավտոմոբիլային բենզինին, դիզելային վառելիք	5	5	100.0%
3.	Խաղալիքներ	76	13	17.1%
4.	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	121	51	42.1%
5.	Ցածրավոլտ սարքավորումներ	146	17	11.6%
6.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն			
7.	Գազանման վառելիքով աշխատող սարքավորումներ	27	0	0.0%
8.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	11	7	63.6%
9.	Վերգետնյա տրանսպորտային միջոցներում օգտագործվող ապակիներ	4	2	50.0%
10.	Սինթետիկ հիմքով լաքեր և ներկեր	28	9	32.1%
11.	Ռադիոսարքավորումներ և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումներ	19	2	10.5%
12.	Մակերևութաակտիվ միջոցներ և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցներ	6	3	50.0%
13.	Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներ	34	13	38.2%
14.	Օդաճնշական դողեր	18	7	38.9%
15.	Ցեմենտ	11	0	0.0%
16.	Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներ	9	1	11.1%
17.	Փաթեթվածք	36	7	19.4%
18.	Սենդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքներ			
Ընդամենը		574	144	25.1%

Հավելված 3

N	Ոլորտի անվանումը	Կիրառված ստուգաթերթերի քանակը			Խախտում տեսակարար կշիռը (%)	Խախտումների բնույթը			Խախտումների ընդհանուր քանակը
		ըստ խախտումների առկայության	ըստ խախտումների բացակայության	Ընդամենը (3+4)		համապատասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն	թերի մակնշում կամ բացակայություն	այլ	
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ)	38	0	38	100	0	0	38	38
2.	Ռադիոսարքավորումներ և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումներ	3	0	3	100	2	2	0	4
3.	Շինարարական ապակիներ	1	0	1	100	0	1	0	1
4.	Ցեմենտ	2	0	2	100	2	0	0	2
5.	Սինթետիկ հիմքով լաքեր և ներկեր	8	1	9	89	6	4	1	11
6.	Խեցեգործական ամանեղեն	6	1	7	86	0	6	0	6
7.	Խաղալիքներ	15	3	18	83	12	9	0	21
8.	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	20	5	25	80	14	12	0	26
9.	Լվացող և մաքրող միջոցներ	8	2	10	80	6	6	0	12
10.	Ցածրավոլտ սարքավորումներ	13	4	17	76	9	7	0	16
11.	Գազանման վառելիքով աշխատող սարքավորումներ	6	2	8	75	4	4	0	8
12.	Քսանյութեր, յուղերին և հատուկ հեղուկներ	8	3	11	73	5	8	3	16
13.	Կենցաղային եվ սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներ	12	5	17	71	8	10	0	18
14.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	9	4	13	69	5	8	0	13
15.	Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք	42	21	63	67	1	11	37	49
16.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն	8	4	12	67	7	5	0	12
17.	Թեթեվ արդյունաբերության	2	1	3	67	2	1	0	3
18.	Օդաճնշական դողեր	2	2	4	50	2	0	0	2
19.	Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքներ	4	4	8	50	4	3	0	7
20.	Չափումների միասնականության ապահովում	47	67	114	41	0	0	47	47
21.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք	1	2	3	33	0	0	1	1
22.	փաթեթվածք	2	5	7	29	0	2	0	2
23.	Ծխախոտային արտադրանք	0	2	2	0	0	0	0	0
24.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեություն	0	2	2	0	0	0	0	0
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	257	140	397	64.7	89	99	127	315

Հավելված 4

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը/գնահատման չափանիշը	Կատարողը	Համակատարը	Ժամկետը
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Տեսչական մարմնի կողմից 2017թ. ընթացքում իրականացված ստուգումների արդյունքների կազմում	Տեսչական մարմնի կողմից 2017թ. ընթացքում իրականացված ստուգումների արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմում և տեղադրում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում,	1. Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն, 2. Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանք-ների բաժին, 3. Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Մինչև հունվարի 20-ը
2.	Ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների, չափագիտական կանոնների և նորմերի կատարման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ վաճառքի, ինչպես նաև հարգորոշման և հարգադրոշմման պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 53 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն 3. Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին	I եռամսյակ
		թվով 75 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			II եռամսյակ
		թվով 64 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			III եռամսյակ
		թվով 48 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			IV եռամսյակ

3.	Համապատասխանության գնահատման ոլորտում իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառում	Համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանք իրացնողների առնվազն 10-12% աճ,	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	-	IV եռամսյակ
4.	Չափագիտության ոլորտում չափագիտական պետական լիազոր մարմնի հետ համագործակցության մակարդակի բարձրացման, և վերահսկողական գործառույթի իրականացում	Ստուգաչափված չափման միջոցների շահագործման առնվազն 8-10% աճ,	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	-	IV եռամսյակ
5.	Մակնշման ոլորտում սպառողների իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառում	Առանց մակնշման կամ թերի մակնշմամբ ոչ պարենային արտադրանքի իրացման նվազում առնվազն 5-ից 7%-ային կետով,	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	-	IV եռամսյակ

6.	Ավտոմոբիլային վառելիքի և սեղմված բնական գազի ոլորտում իրականացնել շարունակական և հետևողական աշխատանքներ	Գործունեության համապատասխանեցում տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	-	Տարվա ընթացքում
7.	Թանկարժեք մետաղների ոլորտում հարգորոշող և հարգադրոշմող հաշվառված անձանց նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացում	Գործունեության համապատասխանեցում տվյալ բնագավառը կարգավորող օրենսդրությանը և ոլորտում մանրածախ վաճառք իրականացնողների մոտ դիտարկումների իրականացում	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	-	Տարվա ընթացքում
8.	<<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի մշակում	Առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթա-շրջանառության բաժին	-	Ի կիսամյակ
9.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի	Առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթա-շրջանառության բաժին	-	Ի կիսամյակ

	նախագծի մշակում				
10.	<<Տեսչական մարմինների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի մշակում	Առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին	-	I կիսամյակ
11.	<<Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի մշակում	Առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին	-	I կիսամյակ
12.	Տեսչական մարմնի վերահսկման ներքո գործող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ հավաքագրված տվյալների վերլուծություն	Առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու նպատակով հավաքագրումված տվյալների վերլուծություն և ամփոփ հաշվետվության կազմում կիսամյակային և տարեկան կտրվածքներով	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Յուրաքանչյուր կիսամյակը հաջորդող 40 օրվա ընթացքում
13.	Տեսչական մարմնի կողմից 2018թ. ընթացքում իրականացված ստուգումների արդյունքներով պայմանավորված ռիսկերի գնահատում	Ըստ ռիսկայնության տնտեսվորող սուբյեկտների դասակարգում և բարձր ռիսկային տնտեսվարող սուբյեկտներին 2019 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	-	IV եռամսյակ
14.	Անձնակազմի կարողությունների զարգացում՝ համագործակցելով ԵԱՏՄ, ԵՄ և այլ միջազգային կառույցների, ինչպես նաև այլ մասնագիտացված շահագրգիռ մարմինների հետ	Կազմակերպել առնվազն երեք դասընթաց՝ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով	Կառուցվածքային ստորաբաժանումներ	-	I և III եռամսյակներ

15.	Դիմում-բողոքներին արձագանքում, խորհրդատվության տրամադրում:	Դիմում-բողոքներով ստացված տեղեկատվության վիճակագրության վարում և կիսամյակային կտրվածքով ամփոփ հաշվետվության կազմում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	-	Յուրաքանչյուր կիսամյակը հաջորդող 20 օրվա ընթացքում
16.	Տեսչական մարմնի կողմից 2019թ. իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագրի կազմում և հրապարակում	Տեսչական մարմնի կողմից 2019թ. իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագրի տեղադրում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում, աշխատանքային ռեսուրսների պլանավորում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն, 3. Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին, 4. Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Մինչև դեկտեմբերի 1-ը

Հավելված 5

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N	Գործողություն	Արդյունք	Ժամկետ	Կատարող /համակատարողներ	Գնահատման չափանիշ
1.	Ըստ տարեկան ծրագրի՝ կիսամյակային պլանի կազմում	Տեսչական մարմնի գործունեությունը ՁԼՄ-ների և հանրության հետ կապերի տեսանկյունից հստակեցում և համակարգում	1-ին կիսմայակը գործունեության ծրագրի հաստատումից հետո 10-օրյա ժամկետում, 2-րդը՝ կիսամյակին նախորդող ամսվա մինչև 20-ը	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Գործողությունների 2 պլան՝ հստակ ժամանակացույցով
2.	Ըստ Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի՝ տնտեսվարողների հետ հանդիպում-քննարկումների կազմակերպում՝ պլանային և ըստ անհրաժեշտության. 2 ոլորտային՝ մայրաքաղաքում և 3 մարզային	Տնտեսվարողների իրազեկության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների և պարտականությունների մասին, հնարավոր խախտումների կանխարգելում և շուկայի խնդիրների որոշակի կարգավորում	Ողջ տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին, Տեսչական մարմնի մասնագիտական ստորաբաժանումներ	Պլանային 5 հանդիպում՝ նվազագույնը 180 մասնակիցների ներգրավմամբ, հանդիպումների լուսաբանում մարմնի պաշտոնական կայքում և ՁԼՄ-ներում
3.	Ըստ Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումների նպատակների, խնդիրների և արդյունքների լուսաբանում՝ տարբեր ձևաչափերով	Հանրության իրազեկության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների մասին, հնարավոր խախտումների կանխարգելում և շուկայի խնդիրների որոշակի կարգավորում	Ողջ տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Յուրաքանչյուր եռամսյակ առնվազն երկու մամուլի հաղորդագրություն, որոնք հրապարակվել և տարածվել են ոչ միայն Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական էջերում, այլև ՁԼՄ-ներում, հարցազրույցներ Տեսչական մարմնի ղեկավար կազմի հետ՝ տարբեր թեմաներով, Տեսչական մարմնի ղեկավարի մամուլի

					ասուլիս՝ առնվազն երկու անգամ տարեկան, այլ ելույթներ և մեկնաբանություններ՝ ըստ անհրաժեշտության
4.	Տեսչական մարմնի լոգոյի մշակում և տարածում, բաների տպագրություն	Տեսչական մարմնի անհատականացման և ճանաչելիության խթանում հանրության շրջանում	Երրորդ-չորրորդ եռամսյակ	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Լոգո, բաներ, լոգոյի տարածում մարմնի կայքի, սոցիալական էջերի և ՁԼՄ-ների միջոցով
5.	Կայք և սոցիալկան մեդիայի էջերի բովանդակային սպասարկում և զարգացում	Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում, հանրության հնարավորինս լայն շրջանակի իրազեկում ժամանակակից մեդիա միջոցների կիրառմամբ	Ողջ տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կայքի և սոցիալական մեդիաէջերի բովանդակության պարբերական թարմացում, կայքում ներկայացվող նյութերի հասանելիությունն ապահովելու նպատակով համապատասխան բովանդակության մշակում, տեղադրում և համակարգում
6.	Անհատական խորհրդատվություն և տեղեկատվություն թեժ գծի, տեղեկատվական թերթիկների, խորհրդատվական նյութեր պատրաստելու և տարածելու ու հանդիպումների միջոցով	Տնտեսվարողների և սպառողների իրազեկում ոլորտը կարգավորող իրավական ակտերի, իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, Տեսչական մարմնի հանդեպ վստահության ձևավորում, սպառողների իրավագիտակցության բարձրացում	Ողջ տարվա ընթաքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին, մասնագիտական մյուս ստորաբաժանումներ	Տեղեկատվական թերթիկներ՝ ուղղված սպառողին և տնտեսվարողին, խորհրդատվական նյութեր՝ հանրության լայն շրջանակին, թվային հաշվետվություն թեժ գծով ստացվող հարցումների և հանդիպումների մասին

7.	Հանդիպում-քննարկումներ ՀԿ-ների և ՁԼՄ-ների մասնակցությամբ՝ պլանային և ըստ անհրաժեշտության	Հանրային առավել լայն արձագանքի ապահովում Տեսչական մարմնի գործունեության առումով, վստահության բարձրացում մարմնի հանդեպ	Յուրաքանչյուր 4 ամիսը մեկ	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին, մասնագիտական մյուս ստորաբաժանումներ	Պլանային 3 հանդիպում
8.	Տեսչական մարմնի մասին մեդիա նյութերի արխիվի ձևավորում, դրանց վերլուծություն	Իրազեկման և քարոզչական քաղաքականության հստակեցում, խնդիրների վերհանում և լուծում	Ողջ տարվա ընթացքում, վերլուծությունները՝ 6 ամիսը մեկ հաճախականությամբ	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Մեդիա նյութերի արխիվ, երկու վերլուծություն
9.	Իրազեկում-հանդիպումների կազմակերպում ուսանողների և դպրոցականների ավագ դասարանների աշակերտների հետ՝ երկու պլանային հանդիպում	Հանրության ավելի ակտիվ խավի իրազեկում, իրավագիտակցության բարձրացում, անուղղակի ազդեցություն սպառողների ավելի ավագ սերնդի ներկայացուցիչների վրա	Առաջին և երկորդ կիսամյակներ	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին, մասնագիտական ստորաբաժանումներ	Երկու հանդիպում՝ բուհում և ավագ դպրոցում, դրանց լուսանբանում մարմնի առցանց աղբյուրներով և ՁԼՄ-ներով
10.	Մշակել առաջարկություններ միջազգային կառույցների հետ հնարավոր համագործակցության նպատակով	Բաժնի կադրային և տեխնիկական կարողությունների զարգացում	Երկրորդ եռամսյակ	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Առաջարկությունների փաթեթ